ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
25/03/2011թ թիվ 38-Լ որոշմամբ
Փոփոխված է 23/09/2011թ թիվ 72-Լ որոշմամբ
27/02/2014թ թիվ 6-Լ որոշմամբ
24/06/2014թ թիվ 25-Լ որոշմամբ
16/12/2014թ թիվ 43-Լ որոշմամբ
31/03/2015թ թիվ 55-Լ որոշմամբ
18/12/2015թ թիվ 99-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«19» փետրվարի 2016թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-032

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԵՎ ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ)

ԵՐԵՎԱՆ - 2015

ԲԱԺԻՆ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոններով սահմանվում են՝

1) Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունների և Բյուրոյի կողմից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ ապահովադիրների, ապահովագրված անձանց, տուժողների (նրանց իրավահաջորդների) և ապահովագրական ընկերությունների (Բյուրոյի) կողմից լրացուցիչ փորձաքննություն նշանակելու համար փոխադարձ համաձայնություն ձեռք բերելու և լրացուցիչ փորձաքննություն նշանակելու կարգը,

2) ԱՊՊԱ ոլորտում ապահովադիրների, ապահովագրված անձանց, տուժողների (նրանց իրավահաջորդների) կամ ապահովագրական ընկերությունների կողմից կրկնակի փորձաքննություն անցկացնելու պահանջով Բյուրոյին դիմելու և Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննություն նշանակելու կարգը:

2. Սույն կանոնների նպատակն է ԱՊՊԱ ոլորտում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման գործընթացների հստակ կանոնակարգման միջոցով ապահովել ապահովադիրների, ապահովագրված անձանց, տուժողների (նրանց իրավահաջորդների), ապահովագրական ընկերությունների (Բյուրոյի) շահերի պատշաճ պաշտպանությունը, ինչպես նաև նպաստել ապահովագրական ընկերությունների (Բյուրոյի) նկատմամբ վստահության բարձրացմանն ու ԱՊՊԱ համակարգի զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2

ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները կիրառվում են հետևյալ իմաստով՝

1) **Բյուրո՝** «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ,

2) **ապահովագրական ընկերություն՝** Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություն,

3) **Օրենք՝** «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

4) **առաջնային փորձաքննություն՝** Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին նախադասության համաձայն նշանակվող փորձաքննություն,

5) **շահագրգիռ անձ՝** ապահովադիր, ապահովագրված անձ, տուժող (նրա իրավահաջորդ):

4. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 3

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Շահագրգիռ անձը, մինչև Օրենքով՝ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու համար նախատեսված ժամկետի ավարտը լրացուցիչ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ փոխադարձ համաձայնություն ձեռք բերելու անհրաժեշտության մասին հայտնում է համապատասխան ապահովագրական ընկերությանը (Բյուրոյին) և իր հայեցողությամբ՝ իրեն հայտնի այլ շահագրգիռ անձանց:

6. Ապահովագրական ընկերությունը (Բյուրոն), լրացուցիչ փորձաքննություն նշանակելու նախաձեռնությամբ հանդես գալու դեպքում, Օրենքով սահմանված ժամկետում և սույն կանոններով սահմանված կարգով շահագրգիռ անձանց հետ համաձայնության է գալիս լրացուցիչ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ:

7. Լրացուցիչ փորձաքննություն նշանակելու փոխադարձ համաձայնություն ձեռք բերելու համար Օրենքով սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջնային փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանցից ամենաուշը ծանուցում ստացած անձի կողմից ծանուցումը ստանալու օրը:

8. Ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) սույն կանոնների 5-րդ կետով սահմանված կարգով լրացուցիչ փորձաքննության նշանակման անհրաժեշտության վերաբերյալ տեղեկանալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ քան 1 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան շահագրգիռ անձին տեղեկացնում է լրացուցիչ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ իր համաձայնության կամ անհամաձայնության վերաբերյալ: Լրացուցիչ փորձաքննություն նշանակելու համար ապահովագրական ընկերության (Բյուրոյի) համաձայնության դեպքում ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) և շահագրգիռ անձը, այլ շահագրգիռ անձանց առկայության դեպքում, միջոցներ են ձեռնարկում այդ անձանց համաձայնությունը ստանալու ուղղությամբ: Լրացուցիչ փորձաքննության նշանակման վերաբերյալ ապահովագրական ընկերության (Բյուրոյի) և շահագրգիռ անձանց միջև սկզբունքային համաձայնության առկայության դեպքում այդ անձինք բանակցությունների միջոցով միմյանց միջև համաձայնեցնում են լրացուցիչ փորձաքննության ներկայացվող հարցերի շրջանակը, լրացուցիչ փորձաքննության ժամկետները, լրացուցիչ փորձաքննություն իրականացնող փորձագետին՝ ստորագրելով լրացուցիչ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ համաձայնագիրը (համաձայն Ձև 1-ի) կամ այլ կերպ գրավոր համաձայնություն տալով նշված համաձայնագրի բովանդակությանը:

9. Օրենքով սահմանված ժամկետում լրացուցիչ փորձաքննության ներկայացվող առնվազն մեկ հարցի, փորձաքննության անցկացման ժամկետի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնող փորձագետի վերաբերյալ փոխադարձ համաձայնություն ձեռք չբերվելու, կամ սույն կանոնների 8-րդ կետով սահմանված համաձայնագիրը չստորագրվելու (համաձայնագրի բովանդակությանը այլ կերպ գրավոր

համաձայնություն չտալու) դեպքում լրացուցիչ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ փոխադարձ համաձայնությունը համարվում է ձեռք չբերված և լրացուցիչ փորձաքննություն չի նշանակվում:

10. Այն դեպքում, երբ լրացուցիչ փորձաքննության անհրաժեշտության վերաբերյալ ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) տեղեկացվել է Օրենքով՝ լրացուցիչ փորձաքննություն նշանակելու համար սահմանված ժամկետի վերջին օրվա ընթացքում, և տեխնիկապես հնարավոր չէ այդ օրվա ընթացքում սույն կանոններով սահմանված կարգով ապահովել ապահովագրական ընկերության (Բյուրոյի), շահագրգիռ անձանց համաձայնությունը և փորձաքննության նշանակումը, ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) շահագրգիռ անձին անմիջապես հայտնում է լրացուցիչ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ իր անհամաձայնության մասին:

ԳԼՈՒԽ 4

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Սույն կանոնների 8-րդ կետով սահմանված համաձայնագիրը Օրենքով սահմանված ժամկետում ստորագրվելու (շահագրգիռ անձանց կողմից համաձայնագրի բովանդակությանն այլ կերպ գրավոր համաձայնություն տալու) դեպքում ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) անմիջապես իրավասու մարմնի ակտով նշանակում է լրացուցիչ փորձաքննություն, որտեղ առնվազն նշվում են սույն կանոնների 8-րդ կետով սահմանված համաձայնագրով համաձայնեցված պայմանները:

12. Լրացուցիչ փորձաքննություն նշանակելու մասին ապահովագրական ընկերությունը (Բյուրոն) անմիջապես, բայց ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում, տեղեկացնում է շահագրգիռ անձանց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ շահագրգիռ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննություն իրականացվելու մասին հավաստվում է սույն կանոնների 8-րդ կետով սահմանված համաձայնագիրը համատեղ ստորագրվելու միջոցով:

ԲԱԺԻՆ 3

ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲՅՈՒՐՈՅԻՆ ԴԻՄԵԼՈՒ, ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 5

ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲՅՈՒՐՈՅԻՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

13. Կրկնակի փորձաքննություն նշանակելու համար շահագրգիռ անձը կամ ապահովագրական ընկերությունը Օրենքով սահմանված ժամկետում Բյուրո է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում՝ ապահովագրական պատահարի արդյունքում գույքին պատճառված վնասների և (կամ) պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննության անցկացման պահանջի մասին (համաձայն համապատասխանաբար Ձև 2-ի, Ձև 3-ի կամ Ձև 4-ի),

2) բողոքարկվող առաջնային (եթե իրականացվել է լրացուցիչ փորձաքննություն՝ նաև՝ լրացուցիչ) փորձագիտական եզրակացության (հաշվետվության) պատճենը (բացառությամբ Բյուրոյի կողմից իրականացվող հատուցման գործընթացի),

3) դիմումն Օրենքով՝ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետում ներկայացնելու հանգամանքը հիմնավորող փաստաթղթեր (բացառությամբ Բյուրոյի կողմից իրականացվող հատուցման գործընթացի): Ընդ որում շահագրգիռ անձանց համար կրկնակի փորձաքննության՝ Օրենքով սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջնային (լրացուցիչ), փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը, իսկ ապահովագրական ընկերության (Բյուրոյի) համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջնային (լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցելու (ստորագրությամբ հանձնելու, փոստով (էլեկտրոնային փոստով) ուղարկելու կամ այդ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում տեղադրելու) օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար Օրենքով սահմանված ժամկետի վերջին օրը:

13.1. Ապահովագրական պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննություն նշանակելու համար ի լրումն սույն կանոնների 13-րդ կետով սահմանված փաստաթղթերի՝ շահագրգիռ անձը կամ ապահովագրական ընկերությունը Օրենքով սահմանված ժամկետում Բյուրո է ներկայացնում նաև հետևյալ փաստաթղթերը (բացառությամբ Բյուրոյի կողմից իրականացվող հատուցման գործընթացի)՝

1) ***(ուժը կորցրել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 18.12.2015թ թիվ 99-Լ որոշմամբ)***

2) վարչական վարույթ կամ քրեական հետապնդում իրականացված լինելու դեպքում՝

ա. վարչական վարույթի կամ հետաքննչական նյութերում առկա պատահարի մասնակիցների բացատրությունների պատճենները,

բ. վարչական վարույթի կամ հետաքննչական նյութերում առկա ճանապարհատրանսպորտային պատահարի սխեմայի պատճենը,

գ. առկայության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով դեպքի վայրի համակողմանի լուսանկարները և (կամ) տեսագրությունը:

3) սույն կետի 2)-րդ ենթակետով չնախատեսված դեպքերում՝

ա. վարչական վարույթի կամ հետաքննչական նյութերում առկա պատահարի մասնակիցների՝ վարույթ իրականացնելու պահանջից հրաժարվելու մասին համաձայնության պատճենը,

բ. պատահարի մասնակիցների բացատրությունների պատճենները,

գ. ճանապարհատրանսպորտային պատահարի սխեմայի պատճենը,

դ. առկայության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով դեպքի վայրի համակողմանի լուսանկարները և (կամ) տեսագրությունը: ***(13.1-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերը փոփ. է 18/12/2015թ թիվ 99-Լ)***

13.2. Շահագրգիռ անձի կամ ապահովագրական ընկերության կողմից սույն կանոնների 13.1-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված փաստաթղթերից որևէ մեկի

ներկայացումը վարչական վարույթ կամ քրեական հետապնդում իրականացնող մարմինների գործողությունների կամ անգործության պատճառով անհնարին լինելու դեպքում շահագրգիռ անձի կամ ապահովագրական ընկերության համար կրկնակի փորձաքննություն նշանակելու՝ Օրենքով սահմանված ժամկետի հաշվարկը կասեցվում է մինչև անհնարինությունը պայմանավորող հանգամանքների վերացումը: Ընդ որում, սույն կետով նախատեսված անհնարինությունը կարող է հիմնավորված համարվել միայն այն դեպքում, եթե սույն կանոնների 13-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կրկնակի փորձաքննության՝ Օրենքով սահմանված ժամկետի սկզբին հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում շահագրգիռ անձը կամ ապահովագրական ընկերությունը Բյուրո է ներկայացրել հիմնավորումներ՝ առ այն, որ համապատասխան փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ վարչական վարույթ կամ քրեական հետապնդում իրականացնող մարմիններին ուղղված գրավոր պահանջի չբավարարման հիմքով հայցադիմում է ներկայացրել դատարան՝ նշված փաստաթղթերը հարկադիր տրամադրելու պահանջով: Շահագրգիռ անձի կամ ապահովագրական ընկերության համար կրկնակի փորձաքննություն նշանակելու՝ Օրենքով սահմանված ժամկետի հաշվարկը վերսկսվում է նաև այն դեպքում, երբ սույն կետով նախատեսված հիմնավորումները ներկայացնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Բյուրո չի ներկայացվել դատարանի կողմից համապատասխան հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ որոշումը: ***(13.2-րդ կետը լրաց. է 24/06/2014թ թիվ 25-Լ)***

14. Բյուրոն կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձից կարող է պահանջել նաև կրկնակի փորձաքննության նշանակման և անցկացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր և տեղեկություններ: Կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձի կողմից սույն կանոնների 13-րդ, 13.1-րդ և 17-րդ կետերով չնախատեսված և սույն կետով սահմանված կարգով Բյուրոյի կողմից չպահանջված փաստաթղթեր ներկայացվելու դեպքում, դրանք չեն ընդունվում Բյուրոյի կողմից և չեն դրվում կրկնակի փորձաքննության հիմքում և փորձագետին ներկայացվող հարցադրումներում:

15. Բյուրոն իր կողմից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ անհրաժեշտության դեպքում Օրենքով սահմանված ժամկետում կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն:

16. Սույն կանոնների 13-րդ, 13.1-րդ և 14-րդ կետերով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը Օրենքով սահմանված ժամկետում ստանալու պահից 1 աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոն կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձին (բացառությամբ՝ ապահովագրողին) հայտնում է (գրավոր կամ բանավոր ձևով) կրկնակի փորձաքննության անցկացման համար պահանջվող գումարի չափի մասին (տվյալ անձի պահանջով՝ ներկայացնում է կրկնակի փորձաքննության անցկացման նախահաշիվ):

17. Կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած շահագրգիռ անձը սույն կանոնների 16-րդ կետով նախատեսված գումարը Բյուրոյին վճարում է կանխիկ կամ անկանխիկ եղանակով և Բյուրո է ներկայացնում վճարման փաստը հավաստող փաստաթուղթը մինչև Օրենքով՝ Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին որոշման կայացման համար սահմանված ժամկետի ավարտը:

Պահանջվող գումարի վճարման փաստը հավաստող փաստաթուղթը սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու դեպքում կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը համարվում է Բյուրոյին ներկայացված Օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ:

18. Շահագրգիռ անձանց կողմից սույն կանոնների 16-րդ կետով սահմանված կարգով պահանջվող գումարի չափի մասին տեղեկանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, այդ գումարը վճարվելու դեպքում կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը համարվում է Բյուրոյին ներկայացված սույն կանոնների 13-րդ կետով սահմանված դիմումը ներկայացնելու օրը: Ապահովագողի կողմից կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը համարվում է ներկայացված սույն կանոնների 13-րդ կետով սահմանված դիմումը ներկայացնելու օրը: Այն դեպքում, երբ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնողը ապահովագրողն է, ապա վերջինիս նախահաշիվ չի ներկայացվում և փորձաքննության համար վճարումը կատարվում է փորձաքննության արդյունքները տրամադրելուց և վերջնական հաշիվ-ապրանքագիրը ներկայացվելուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 6

ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Սույն կանոնների 13-րդ, 13.1-րդ, 14-րդ, ինչպես նաև 17-րդ (բացառությամբ ապահովագրողի) կետերով նախատեսված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ քան Օրենքով սահմանված ժամկետի ավարտը Բյուրոն որոշում է կայացնում կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին: Նման որոշում Բյուրոն կարող է կայացնել նաև սույն կանոնների 15-րդ կետով սահմանված կարգով:

20. Բյուրոն մերժում է կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը, եթե՝

1) չեն պահպանվել Օրենքով և սույն կանոններով սահմանված՝ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու (ներառյալ՝ պահանջվող գումարի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելու) ժամկետները,

2) նույն ապահովագրական պատահարի շրջանակներում իրականացվել է (իրականացվում է) պատահարի պատճառների կամ վնասների գնահատման փորձաքննության արդյունքների կրկնակի փորձաքննություն,

3) պարզվում է, որ բողոքարկվող եզրակացության (հաշվետվության) հետ կապված իրականացվում է լրացուցիչ փորձաքննություն:

21. Կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը մերժվելու դեպքում Բյուրոն կրկնակի փորձաքննության անցկացման համար վճարված գումարը վերադարձնում է այդ գումարը վճարած անձին:

22. Այն դեպքում, երբ նույն փորձագիտական եզրակացության կապակցությամբ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ են ներկայացրել մեկից ավելի շահագրգիռ անձինք, ապա կրկնակի փորձաքննությունը նշանակվում է փորձաքննության անցկացման համար պահանջվող գումարի վճարումը հավաստող փաստաթուղթը առաջինը Բյուրո ներկայացրած անձի պահանջով, պայմանով, որ մինչև այդ պահը ապահովագրողը կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չի ներկայացրել, որի

դեպքում կրկնակի փորձաքննություն նշանակվում է ապահովագրողի պահանջով: Սույն կետով նախատեսված դեպքում Բյուրոն վերադարձնում է բոլոր այն անձանց կատարած վճարումները, ովքեր սույն կետի իմաստով չեն համարվում կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձինք:

23. Կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ նշվում են կրկնակի փորձաքննություն պահանջած անձի կողմից մատնանշված այն հանգամանքները, որոնց պետք է փորձագետը առանձնահատուկ ուշադրություն դարձնի կրկնակի փորձաքննության ժամանակ:

24. Բյուրոն իր կողմից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին անմիջապես, բայց ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է շահագրգիռ անձանց, իսկ ապահովագրական ընկերությունների կողմից իրականացվող հատուցման գործընթացի դեպքում՝ համապատասխան ապահովագրական ընկերությանը, և եթե կրկնակի փորձաքննության համար դիմողը ապահովագրական ընկերությունը չէ, նաև՝ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձին: Ապահովագրական ընկերությունն իր հերթին պարտավոր է անմիջապես, բայց ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում կրկնակի փորձաքննության անցկացման մասին ծանուցել շահագրգիռ անձանց (բացառությամբ այն անձի, ում պահանջով իրականացվում է կրկնակի փորձաքննությունը):

24.1. Պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննության իրականացումը 2015 թվականի հունիսի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ներկայացված պատվերների մասով չպետք է գերազանցի 2 ամիսը, իսկ դրանից հետո ներկայացված պատվերների մասով՝ 1 ամիսը: Վնասների գնահատման կրկնակի փորձաքննության իրականացումը չպետք է գերազանցի 10 աշխատանքային օրը: ***(24.1-րդ կետը լրաց. է 31/03/2015թ թիվ 54-Լ)***

25. Բյուրոն իր կողմից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ կրկնակի փորձաքննության արդյունքների մասին անմիջապես, բայց ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է շահագրգիռ անձանց, իսկ ապահովագրական ընկերությունների կողմից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ՝ համապատասխան ապահովագրական ընկերությանը, և եթե կրկնակի փորձաքննության համար դիմողը ապահովագրական ընկերությունը չէ, նաև՝ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացրած անձին՝ ուղարկելով փորձագետի եզրակացության պատճենը և նշելով դրա իրավական նշանակությունն ու բողոքարկման կարգը: Ապահովագրական ընկերությունն իր հերթին պարտավոր է կրկնակի փորձաքննության արդյունքների մասին անմիջապես, բայց ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել շահագրգիռ անձանց (բացառությամբ այն անձի, ում պահանջով իրականացվել է կրկնակի փորձաքննությունը):

26. Կրկնակի փորձաքննության արդյունքները փորձաքննության պահանջ ներկայացրած անձին ծանուցելուց և հաշիվ-ապրանքագիրը ներկայացվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, կատարվում է փոխհաշվարկ Բյուրոյի և այդ անձի (բացառությամբ՝ ապահովագրողի) միջև. եթե կրկնակի փորձաքննության համար վճարված գումարը գերազանցում է Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության

իրականացման համար փորձագետին վճարված գումարը, ապա Բյուրոն կրկնակի փորձաքննության պահանջ ներկայացրած անձին վերադարձնում է այդ գումարի դրական տարբերությունը, իսկ եթե կրկնակի փորձաքննության համար վճարված գումարը պակաս է Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարից, ապա կրկնակի փորձաքննության պահանջ ներկայացրած անձի կողմից համապատասխան տարբերության չափով փոխհատուցվում են Բյուրոյի կողմից կատարված ծախսերը:

26.1. Նշանակված կրկնակի փորձաքննությամբ պատահարի հանգամանքների կամ վնասի չափի որոշման (ամբողջությամբ կամ մասամբ) անհնարինության դեպքում կրկնակի փորձաքննության արդյունք են համարվում տվյալ պատահարի (գույքի) գծով իրականացված առաջնային փորձաքննության արդյունքները:

ԲԱԺԻՆ 4

(Ուժը կորցրել է «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ խորհրդի 31.03.2015թ թիվ 55-Լ որոշմամբ)

Ձև 1
«ԱՊՊԱ ոլորտում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման» կանոնների

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____ «___» _____20 ___թ.
կնքման վայրը

Մենք՝
Ապահովագրական ընկերություն (Բյուրո)՝_____
(անվանումը, իրավասու անձի անուն, ազգանունը, իրավասության հիմքը)

Տուժող (իրավահաջորդ)՝_____
(անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ, հասցե)

Ապահովադիր _____
(անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ, հասցե)

Ապահովագրված անձ)՝_____
(անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ, հասցե)

հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայնության եկանք լրացուցիչ փորձաքննություն նշանակելու վերաբերյալ՝ հետևյալ պայմաններով.

- Լրացուցիչ փորձաքննության իրականացումը հանձնարարել _____-ին:
(փորձագետի անուն ազգանունը կամ փորձագիտական կազմակերպության անվանումը)
- Փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.
1._____
2._____
- Փորձաքննության իրականացման ժամկետ սահմանել _____ օր:

Ապահովագրական ընկերության (Բյուրոյի) անունից՝ _____
Տուժող (իրավահաջորդ)՝ _____
Ապահովադիր՝ _____
Ապահովագրված անձ՝ _____

Ձև 2
«ԱՊՊԱ ոլորտում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման» կանոնների

«Հայաստանի ավտոապահովագրողների Բյուրո» ԻԱՄ
գործադիր տնօրեն _____ին
դիմող՝_____-ից
հասցե՝ _____
հեռ՝_____

ԴԻՄՈՒՄ
ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի _____,

Հայտնում եմ Ձեզ, որ 20___ թվականի _____-ին _____ ապահովագրական ընկերությանը («Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին) դիմում է ներկայացվել հատուցում ստանալու համար: 20___ թվականի _____-ին ստացվել է փորձագետի թիվ _____ եզրակացությունը /հաշվետվությունը/, իսկ 20___ թվականի _____-ին լրացուցիչ փորձաքննությունն իրականացրած փորձագետի եզրակացությունը /հաշվետվությունը/, որի հետ համաձայն չեմ:

1. Խնդրում եմ փորձագետի «___» _____20___թ. թիվ _____ եզրակացության (հաշվետվության) կապակցությամբ նշանակել պատճառված վնասի կրկնակի փորձաքննություն՝ փորձագետի ուշադրությունը հրավիրելով հետևյալ հանգամանքների և հարցերի վրա՝

1) _____
2) _____
3) _____

Պարտավորվում եմ Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարի վերաբերյալ տեղեկացվելուց հետո Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետում կանխիկ կամ անկանխիկ եղանակով վճարել փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարը:

Տեղեկացված եմ, որ կրկնակի փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Բյուրոն կմերժի կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը:*

Իրազեկված եմ, որ կրկնակի փորձաքննության արդյունքների մասին ծանուցվելուց հետո պետք է կատարվի փոխհաշվարկ Բյուրոյի և իմ (ընկերության) միջև, և որ եթե

նախահաշվի հիման վրա վճարված գումարը գերազանցի Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարը, ապա Բյուրոն ինձ (ընկերությանը) կվերադարձնի այդ գումարի դրական տարբերությունը, իսկ եթե կրկնակի փորձաքննության անցկացման համար վճարված գումարը պակաս է Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարից, ապա ես (ընկերությունը) պետք է համապատասխան տարբերության չափով փոխհատուցեմ (փոխհատուցի) Բյուրոյի կողմից կատարված ծախսերը:*

Սույն դիմումի ստորագրմամբ պարտավորվում եմ Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության արդյունքների վերաբերյալ ծանուցվելու և հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոյին փոխհատուցել կրկնակի փորձաքննության իրականացման համար վերջինիս կողմից փորձագետին իմ (ընկերության) վճարած գումարից ավել վճարած գումարը:*

2. Կից ներկայացնում եմ՝**

1) բողոքարկվող առաջնային (լրացուցիչ) փորձագիտական եզրակացության (հաշվետվության) պատճենը,

2) առաջնային (լրացուցիչ) փորձագիտական եզրակացությունը (հաշվետվությունը) իմ (ընկերության) կողմից ստանալու օրը հավաստող փաստաթղթեր,

3) _____,

4) _____ :

Առդիր՝ «_____» թերթ:

Դիմող ՝ _____

(ստորագրությունը անուն, ազգանուն, ընկերության անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը)

_____

Կ. Տ

բնակության (գործունեության) հասցե,

հեռախոսահամար,

«___» _____20 թ.

* Սույն պարբերությունները չեն լրացվում ապահովագրողների կողմից ներկայացվող դիմումներում:

** Սույն պարբերությունը չի ներառվում Բյուրոյի կողմից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ ներկայացվող դիմումներում:

Ձև 3
«ԱՊՊԱ ոլորտում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման» կանոնների

«Հայաստանի ավտոապահովագրողների Բյուրո» ԻԱՄ
գործադիր տնօրեն _____ -ին
դիմող՝_____-ից
հասցե՝ _____
հեռ՝_____

ԴԻՄՈՒՄ
ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի _____,

Հայտնում եմ Ձեզ, որ 20___ թվականի _____-ին _____ ապահովագրական ընկերությանը («Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին) դիմում է ներկայացվել հատուցում ստանալու համար: 20___ թվականի _____-ին ստացվել է փորձագետի թիվ _____ եզրակացությունը /հաշվետվությունը/, իսկ 20___ թվականի _____-ին լրացուցիչ փորձաքննությունն իրականացրած փորձագետի եզրակացությունը /հաշվետվությունը/, որի հետ համաձայն չեմ:

1. Խնդրում եմ փորձագետի «___» _____20___թ. թիվ _____ եզրակացության (հաշվետվության) կապակցությամբ նշանակել կրկնակի փորձաքննություն՝ փորձագետի ուշադրությունը հրավիրելով այն հարցի վրա, թե _____ պատահարում ներգրավված անձանցից ու՞մ գործողություններով (անգործությամբ) է պայմանավորված տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը:

2. Նկատառումներս պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ հետևյալն են՝
1) _____
2) _____
3) _____

Պարտավորվում եմ Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարի վերաբերյալ տեղեկացվելուց հետո Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետում կանխիկ կամ անկանխիկ եղանակով վճարել փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարը:

Տեղեկացված եմ, որ կրկնակի փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Բյուրոն կմերժի կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը:*

Իրազեկված եմ, որ կրկնակի փորձաքննության արդյունքների մասին ծանուցվելուց հետո պետք է կատարվի փոխհաշվարկ Բյուրոյի և իմ (ընկերության) միջև, և որ եթե նախահաշվի հիման վրա վճարված գումարը գերազանցի Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարը, ապա Բյուրոն ինձ (ընկերությանը) կվերադարձնի այդ գումարի դրական տարբերությունը, իսկ եթե կրկնակի փորձաքննության անցկացման համար վճարված գումարը պակաս է Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարից, ապա ես (ընկերությունը) պետք է համապատասխան տարբերության չափով փոխհատուցեմ (փոխհատուցի) Բյուրոյի կողմից կատարված ծախսերը:*

Սույն դիմումի ստորագրմամբ պարտավորվում եմ Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության արդյունքների վերաբերյալ ծանուցվելու և հաշիվ-ապրանքագիրը ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոյին փոխհատուցել կրկնակի փորձաքննության իրականացման համար վերջինիս կողմից փորձագետին իմ (ընկերության) վճարած գումարից ավել վճարած գումարը:*

3. Կից ներկայացնում եմ՝**

1) բողոքարկվող առաջնային (լրացուցիչ) փորձագիտական եզրակացության (հաշվետվության) պատճենը,
2) առաջնային (լրացուցիչ) փորձագիտական եզրակացությունը (հաշվետվությունը) իմ (ընկերության) կողմից ստանալու օրը հավաստող փաստաթղթեր,
3) _____ ,
4) _____ :

Առդիր՝ «_____» թերթ:

Դիմող՝

_____

(ստորագրությունը անուն, ազգանուն, ընկերության անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը)

_____

Կ. Տ

բնակության (գործունեության) հասցե,

հեռախոսահամար,

«___» _____20 թ.

* Սույն պարբերությունները չեն լրացվում ապահովագրողների կողմից ներկայացվող դիմումներում:

** Սույն պարբերությունը չի ներառվում Բյուրոյի կողմից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ ներկայացվող դիմումներում:

Ձև 4
«ԱՊՊԱ ոլորտում լրացուցիչ և կրկնակի փորձաքննությունների նշանակման» կանոնների

«Հայաստանի ավտոապահովագրողների Բյուրո» ԻԱՄ
գործադիր տնօրեն
_____ -ին

դիմող՝_____-ից
հասցե՝ _____
հեռ՝_____

ԴԻՄՈՒՄ
ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարգելի _____,

Հայտնում եմ Ձեզ, որ 20___ թվականի _____-ին _____ ապահովագրական ընկերությանը («Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին) դիմում է ներկայացվել հատուցում ստանալու համար: 20___ թվականի _____-ին ստացվել է փորձագետի թիվ _____ եզրակացությունները /հաշվետվությունները/, իսկ 20___ թվականի _____-ին լրացուցիչ փորձաքննությունն իրականացրած փորձագետի եզրակացությունը /հաշվետվությունը/, որի հետ համաձայն չեմ:

Գույքին պատճառված վնասների մասով՝

1. Խնդրում եմ փորձագետի «___» _____20___թ. թիվ _____ եզրակացության (հաշվետվության) կապակցությամբ նշանակել կրկնակի փորձաքննություն՝ փորձագետի ուշադրությունը հրավիրելով հետևյալ հանգամանքների և հարցերի վրա՝

1) _____
2) _____
3) _____

2. Կից ներկայացնում եմ՝*

1) բողոքարկվող առաջնային (լրացուցիչ) փորձագիտական եզրակացության (հաշվետվության) պատճենը,

2) առաջնային (լրացուցիչ) փորձագիտական եզրակացությունը (հաշվետվությունը) իմ (ընկերության) կողմից ստանալու օրը հավաստող փաստաթղթեր,

3) _____,

4) _____:

Պատահարի առաջացման պատճառների մասով՝

1. Խնդրում եմ փորձագետի «___» _____20___թ. թիվ _____ եզրակացության (հաշվետվության) կապակցությամբ նշանակել կրկնակի փորձաքննություն՝ փորձագետի ուշադրությունը հրավիրելով այն հարցի վրա, թե _____ պատահարում ներգրավված անձանցից ու՞մ գործողություններով (անգործությամբ) է պայմանավորված տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը:

2. Նկատառումներս պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ հետևյալն են՝

1) _____
2) _____
3) _____

3. Կից ներկայացնում եմ՝*

1. բողոքարկվող առաջնային (լրացուցիչ) փորձագիտական եզրակացության (հաշվետվության) պատճենը,
2. առաջնային (լրացուցիչ) փորձագիտական եզրակացությունը (հաշվետվությունը) իմ (ընկերության) կողմից ստանալու օրը հավաստող փաստաթղթեր,
3. _____ ,
4. _____:

Պարտավորվում եմ Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարի վերաբերյալ տեղեկացվելուց հետո Բյուրոյի կանոններով սահմանված ժամկետում կանխիկ կամ անկանխիկ եղանակով վճարել փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարը:

Տեղեկացված եմ, որ կրկնակի փորձաքննություն անցկացնելու համար պահանջվող գումարը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում Բյուրոն կմերժի կրկնակի փորձաքննության անցկացման պահանջը:**

Իրազեկված եմ, որ կրկնակի փորձաքննության արդյունքների մասին ծանուցվելուց հետո պետք է կատարվի փոխհաշվարկ Բյուրոյի և իմ (ընկերության) միջև, և որ եթե նախահաշվի հիման վրա վճարված գումարը գերազանցի Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարը, ապա Բյուրոն ինձ (ընկերությանը) կվերադարձնի այդ գումարի դրական տարբերությունը, իսկ եթե կրկնակի փորձաքննության անցկացման համար վճարված գումարը պակաս է Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության իրականացման համար փորձագետին վճարված գումարից, ապա ես (ընկերությունը) պետք է համապատասխան տարբերության չափով փոխհատուցեմ (փոխհատուցի) Բյուրոյի կողմից կատարված ծախսերը:**

Սույն դիմումի ստորագրմամբ պարտավորվում եմ Բյուրոյի կողմից կրկնակի փորձաքննության արդյունքների վերաբերյալ ծանուցվելու և հաշիվ-ապրանքագիրը

ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում Բյուրոյին փոխհատուցել կրկնակի փորձաքննության իրականացման համար վերջինիս կողմից փորձագետին իմ (ընկերության) վճարած գումարից ավել վճարած գումարը:**

Առդիր՝ «_____» թերթ:

Դիմող՝ _____

(ստորագրությունը անուն, ազգանուն, ընկերության անվանումը, իրավասու անձի անունը, ազգանունը)

_____

Կ. Տ

բնակության (գործունեության) հասցե, հեռախոսահամար,

«___» _____20 թ.

* Սույն պարբերությունը չի ներառվում Բյուրոյի կողմից իրականացվող հատուցման գործընթացի ժամանակ ներկայացվող դիմումներում:

** Սույն պարբերությունները չեն լրացվում ապահովագրողների կողմից ներկայացվող դիմումներում: